

ԱՐՁԱՆՈՒՄ - 320-13-1



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԻՐԵՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ


Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 13

15 ՄԱՅԻՍ 1920

Հայ եղբունին մատուցած զոհերէն, մեծ
մարտիրոսներէն



ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԴԱՆԻԷԼԵԱՆ



ԱՐԱՄ (ԳՐԻԳՈՐ) ԱԶԸԲՊԱՇԵԱՆ

ԳԻՆ 100 ՓՐ.

ՏՔԹ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային
եւ զղայոց հիւանդութեանց

Գումգարու, Զիֆթէ Կէլին, դեղ. Ա. Ս.
Արսէնեան, թիւ 118 եւ Կէտէկ Փաշա
Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ լաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ գլխացաւի. Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց. Կենսաբանական վերջին
տուիրներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կածութիւնը. Առողջական վիճակի ման-
րագնին քննութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջքը
կ'առնէ. Հիւանդագին եւ փափկակազ
տղաքներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ.

Անոնք որ առողջ միտք ունենալ կը փա-
փարին, առողջ մարմին ունենալու են,
հետեւաբար անպայման դիմելու են
վերոգրեալ հասցէին.

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՇԷՔԵՐԵԱՆ

Չարմաքճըլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայագիտ, Մաքասճըլար, թիւ 5

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնէ Գաբու: Մէյվախօժ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ եւ

ՏՔԹ. Կ. ՔԵՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, Նոր Նամակատան կից Նիւզհէթ
Զիա դեղարանին վերնայարկը.

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ

ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ

Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻԻ 2

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան
նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԵԻՍԵԱՆ

ԱՏՆՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, Նոր Նամակատան դէմ, Վլօրա
խան, թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ տոմամնաշարեր, գուրօններ,
պուխներ եւ բիւօններ.

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Օրխան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ գեղարուեստական
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն.

ՓՄԲԱԿՐԱԿԱՆ

ԻՆՉՈՒ ԿԸ ՍԻՐԵՆՔ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Փոքրիկ բարեկամներու,

Ասկէ առաջ առիթով մը ձեզի խօսեցայ Բնութեան Սիրոյն մասին, բացատրել ջանալով թէ ի՞նչ է ան: Ըսի նաեւ թէ մարդս իր Ֆիզիքական ու հոգեկան կրկնակ կեանքերով կապակցութիւն ունի Բնութեան հետ, ազդեցութիւններ կը ստանայ անկէ ու այդ կերպով մեր մէջ սէր մը յառաջ կուգայ Բնութեան հանդէպ: Ուրեմն այս առթիւ ջանանք հասկնալ թէ ինչո՞ւ կը սիրենք Բնութիւնը:

Բնութիւնը կը սիրենք նախ անոր համար որ ան ուղղակի կապակցութիւն ունի մեր Ֆիզիքական կեանքին հետ: Թէեւ մարդս իբրեւ բանական էակ մտաւոր ու հոգեկան բարձր կեանքով ու կարողութիւններով օժտուած է, սակայն չենք կրնար մոռնալ թէ մեր Ֆիզիքական կեանքն ու սքանչելի գործարանաւորութիւնը կապուած են նիւթին ու նիւթականին հետ. և եթէ սնունդով, պաշտպանութեամբ և առողջապահիկ պայմաններու կիրառութեամբ չպահենք չղօրացնենք մեր մարմինները, մեր մտաւոր ու հոգեկան բարձր կարողութիւններն ու անոնց գործունէութիւնը, կը խամրին աշնանահար ծաղիկներու պէս: Պէտք չէ անտեսել մարմինը. որովհետեւ ան «հոգիին տաճարն» է: Սխալ է այն հին միջնադարեան վարդապետութիւնը որ կ'ուսուցանէր թէ մարդ իր մարմինը, զրկումներու և տառապանքներու ենթարկելով հոգեկան աւելի բարձր վերացումներ կ'ունենայ եւ աւելի բարի կ'ըլլայ: Մարմինը թանկագին գանձ մը, հարստութիւն մըն է Աստուծոյ մեզի շնորհուած: Եւ որովհետեւ Ստեղծողին հիասքանչ կարգադրութեամբ Բնութիւնը մայր հայթայթիչն է մեր ամէն տեսակ Ֆիզիքական պէտքերուն, մենք պէտք է սիրենք զայն, ու կը սիրենք ալ: Երկրագործը, պարտիզպանը, դուարաբոյժը, ո՛րչափ պարտական են Բնութեան և ո՛րչափ կը սիրեն զայն: Թէեւ ճշմարիտ է որ իրենք ալ իրենց կողմէ աշխատութիւն կը թափեն Բնութեան բարիքներէն օգտուելու համար, բայց առանց Բնութեան պարգեւներուն և իրենց աշխատութիւնը արդիւնաւորելու միջոցներուն՝ ոչինչ պիտի արժէր իրենց աշխատութիւնը: Հետեւաբար կը տեսնէք թէ զրեթէ բոլորովին օգտապաշտական բնոյթ մը ունի այս տեսակէտով մեր սէրը Բնութեան հանդէպ: Համադամ ճաշերով ծածկուած սեղանի մը մասնակցելով, մաքուր ձեռք մը զգեստ հագնելով հանգրստաւէտ բնակարաններու մէջ ապրելով ուղղակի Բնութիւնը կը վայելենք, նոյն ատեն իբրեւ արդիւնք մեր աշխատութիւններուն:

Բնութիւնը կը սիրենք նաեւ անոր համար որ ան մեր մտաւոր

խուղարկութիւններուն և ուսումնասիրութիւններուն յագուրդ կուտայ : Բնութիւնը մեծ գիրք մըն է զայն Ստեղծողին ու Կառավարողին մատ- ներովը գրուած : Աշխարհիս ամէնէն մեծ գիտուններն իսկ ակնածանքով ծնրադրած են այս մեծ մատեանին առջեւ , թղթատած են անոր խոր- հուրդներով լեցուն էջերը , իրենց կեանքին բոլոր տեւողութեանը ու- սած և ուսումնասիրած են զայն ու նոյն ատեն խոստովանած են թէ իրենք դեռ չատ տգէտ են Բնութեան մասին : Մեծ գիտուն մը իր գի- տութեան շատ սահմանափակ ըլլալը խոստովանելով ըսած է թէ ինքը կը նմանի մանկան մը որ գիտութեան անծայրածիր ովկէանին եղերքը խիճեր միայն կը հաւաքէ : Ինչ սքանչելի օրինակ ճշմարիտ ինքնագի- տակցութեան : Ուրեմն ինչ ըսել կը վայելէ բնական գիտութեանց հա- զիւ այբուբէնը հեզող մեր համայնագէտ իմաստականներուն : Ահա այսպէ- սով Բնութիւնը ամէնէն մեծ գիտուններն իսկ խոնարհեցնող ու անոնց իմաստութիւն սորվեցնող դասերով կը խօսի մեր միտքերուն . անոր համար ամէն ճշմարիտ ուսումնասիրող սիրած է Բնութիւնը , կեանքը նուիրած է անոր գաղտնիքները լուծելու և սորվելու անկէ : Սուէք , օ- րինակի համար , պարզ տերեւ մը . անոր ձեւը , գոյնը , կազմութիւնը , անոր մէջ բուսական կեանքի հրաշքը իւրաքանչիւրը մէյմէկ գաղտնիք- ներ են : Բայց երբ խորհինք ծառին վրայ , բոլոր բուսական աշխարհին վրայ . ինչ անհուն թուիչ մեր միտքին ու մտաւոր կարողութիւններուն համար , անհունութիւն մը ծիլ մը տերեւին մէջ ծրարուած : Բայց ինչ ըսենք Բնութեան բիւրազան հրաշալիքներուն համար , այդ մեծ մատ- եանին միլիոնաւոր էջերուն համար : Մարդկային միտքին համար , այո՛ , իսկապէս սիրելի է Մայր Բնութիւնը , ինչպէս մայր մը սիրելի է իր հոգեհատոր զաւկին համար :

Վերջապէս գիտենք թէ մեր հոգեկան կեանքն ալ յագեցում կը գտնէ Բնութեան մէջ : Իսրայէլի սաղմոսերգու մեծ բանաստեղծին հա- մակ հիացում յայանութիւնը ամէն դարու համար կը հնչէ . « Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ , և երկնից հաստատութիւնը անոր ձեռաց գործերը կը ցուցնէ : » Ճշմարիտ գիտուն մը , և մինչեւ իսկ պարզամիտ ռամիկ մը Բնութեան այս խորհրդառքող վեհավայրին մէջ չի կրնար անտեսել գոյութիւնն ու գործերը մեծ Միտքի մը , անհուն Իմացակա- նութեան մը , զոր մենք կ'անուանենք Ստեղծող—Աստուած : Ու պահ հոգկէ է որ կը սկսի հոգեկան կեանքը : Արարիչին ու արարածին միջեւ կապակցութիւն մը , հոգեկան հաղորդակցութիւն մը , ահա ա՛յս իսկ է հոգեւոր կեանքը : Այս մասին Բնութիւնը մեծագոյն ուսուցիչն է մեր , հերիք որ խոնարհ հոգիով յօժարինք ուսանիլ անկէ : Երկինքը Աստու- ծոյ փառքը կը պատմէ , հապա անծայրածիր ծովը , այլազան արարած- ները , բուսական աշխարհը , ու այս ամէնէն գերիվեր գլուխ-գործոց մարդ էակը : Եւ ինչ ըսել մարդկային հոգիին գաղտնիքին համար : Եւ ինչպէս չի վերանալ մարդկային հոգիէն այն արեղերապարփակ մեծ հոգիին , որուն ձեռակերտն է այս հրաշալիքներու ճոխ գանձարան Մայր Բնութիւնը , և ինչպէս չսիրել զայն ու չերկրպագել անոր Արարիչին :

Յաջորդով պիտի խօսիմ ձեզ Բնութեան սիրոյ օգուտներուն մասին :

Մ Ա Յ Ի Ս

Ահա նորէն եկաւ Մայիս,
Թոյրի, բոյրի, երգի ամիս,
Վերածնութիւնն է Բնութեան,
Կը հրնրւի աշխարհի համայն,

Լեռ, դաշտ, անտառ կանանչ համալ,
Բիւր ծաղիկներ գունակ, գունակ,
Մայր-Բրնաւթեան կուրծքը նորէն
Շրթեղօրէն կը զարդարեն:

Զիւնհայն եկաւ. ձորին մեջէն
Զինջ առուակներ կը խոխոջեն,
Հեղեղներ հոն, աղբիւրներ հոս,
Կը ջրվեժէն առաստափոս:

Մեջն հովիթին ու մարգերուն,
Կը ցասկըռտեն գառներ 'նիրուն,
Պարտեզներուն մեջ մանուկներ
Կ'ըլլան անոնց շէն խաղըրնկեր:

Ու թռչնիկներ ճի՛ւղ, ճի՛ւղ կ'երգեն,
Թաւուսներուն նրսեմ խորքէն,

Բնութիւնն համալ իբրեւ բնար,
Կը թրթրուայ բերրապատար...:

Հո՛ն, ծրփացող ծովն ալ ծիծղուն,
Թաց հարուածովն ալիքներուն՝
Ծոյլ, ծոյլ ծեծէ իր եզերքներ
Ցոյացնելով անոնց պատկեր:

Վերն երկինքին ծոցը անհուն,
Վարը դաշին լանջքը նախշուն,
Աւարածներ բազմապիսի
Կը տօնեն հե՛տ տօն Մայիսի:

Բայց որչափ որ մարդիկ համայն
Վառուած կիրճովն ասելութեան՝
Մեջ գեղեցիկ այս աշխարհին,
Կասաղաբար կը պայքարին:

Իմ սիրքս, ա՛խ, Մայիս չունի,
Խոր խոցերով յար կ'արիւնի.

Ես կը սպասեմ միշտ անձկագին
Եղբայրութեան մեծ Մայիսին

Մայիս, 1946

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Երկու կասու, է՛հ, հարկաւ,
Շուն մը կը խեղդեն.
Երկու սրկար ալ, իրա՛ւ,
Երբեմն կը յառթեն:

Ետեւ մնացող շուներ
Վազան կ'ըլլայ.
Ետեւ մնացող գործը
Տաժան կ'ըլլայ:

Երկինքէն ի՞նչ է ինկեր
Որ գետինը չի տանի.
Բախտին դէմ, ո՛վ իմ բնկեր,
Տրտուեցն օգու՛տ մը չունի:

Երբ բերանը կը հոսի՝
Սիրքը լեցուն է.
Երբ մարդ վիշտը կը խօսի՝
Մեջը եռուն է:

Ելա՛ւ փառսունգք,
Հասաւ արցունգք,
Այն որ սիրէն չէ,
Արդէն ոչինչ է: ԱՌԱԿԱԽՍ

ՈՎ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԵՐ

ԳԹԱԾ ԸԼԼԱՆՔ

Ա.

Կէս օրը կէս ժամ անցած է .
Լուի և Մարկոս , երկու մտերիմ
դասընկերներ տունը ճաշելէ վերջ
դպրոց կը վերադառնան :

Փողոցին անկիւնը անոնք կը
պատահին կոյր Միքայէլին , որ
կտաւէ հին պարկի մը վրայ կրծ-
կըտած , անցորդներուն կ'երկարէ
իր փայտանօթը :

Մարկոս տեսնելով այս աշա-
ղուրկ թշուառը՝ կը զգածուի , կը
հանէ գրպանէն ունեցած միակ
փողը ու կը ձգէ կոյրին փայտա-
նօթին մէջ :

Այդ փողը նոր ստացած էր
ան իր մօրմէն , շերտ մը բռնա-
յով շօֆօլա գնելու համար :

Երբ երկու տղաքը քանի մը
քայլ հեռացան , Լուի ըսաւ Մար-
կոսին .

— Դուն սխալ ըրիր , քու փողդ
այդ կոյրին տալով . ան . . .

— Ի՞նչպէս սխալ ըրի , ընդմի-
ջեց Մարկոս զարմացած , դուն
ինքդ շատ անգամ աղքատներուն
ողորմութիւն տուած ես , տեսած
եմ :

— Ուրիշներու ա՛յո , բայց Մի-
քայէլին՝ ո՛չ . ան արժանի չէ՛ :

— Բայց ինչո՞ւ :

— Որովհետեւ չար մըն է ան .
դուն չե՛ս գիտեր իր պատմու-
թիւնը , որովհետեւ դեռ քիչ ա-
տեն է որ կը բնակիս մեր քաղա-
քը : Պատմեմ , մտի՛կ ըրէ .

« Կոյր ըլլալէ առաջ Միքայէլ
մտագործ էր : Բայց ան չէր գոհա-

նար կենդանիները մորթելով . ան
զուր տեղը կը չարչարէր զանոնք :
Օրինակի համար , եթէ սպանդա-
նոց երթալիք ոչխարներ ունենար ,
զանոնք փախչելէ արգիլելու , և
աւելի դիւրաւ տանելու համար ,
ան սրածայր դանակով մը կը փո-
րէր անոնց աչքերը . . . »

— Ո՛հ , ի՞նչ սարսափելի բան . . .

— Դաժան չէ՞ այս : Է՛հ , հիմա
Միքայէլ պատիժը գտաւ . աչքերը
կուրցան : Ան կորսնցուց նաեւ իր
կիւնը և զաւակները , և հիմա շուն
մը անգամ շունի առաջնորդուելու
համար . մարդ չէ ուզած շուն մը
տալ անոր , վախնալով որ կը չար-
չարէ :

— Եթէ բոլոր այս ըսածներդ
իրաւ են , յայտարարեց Մարկոս ,
կը խոստովանիմ որ այդ Միքա-
յէլը շատ քիչ արժանի է կարեկ-
ցութեան :

— Վստահ եմ որ հիմա կը ցա-
ւիս անոր ողորմութիւն տուած
ըլլալուդ համար :

— Ո՛հ , այդ բանին համար՝ ո՛չ
երբէք , բողոքեց ագդուօրէն Մար-
կոս : Կը կրկնեմ թէ ես ողորմելու
չպիտի վարանէի . աւելի հաճոյք
կը զգամ կոյրին ամանին մէջ ձգե-
լով իմ փողս քան թէ բռնայով
շօֆօլա ճաշակելով :

— Սակայն . . . յարեց Լուի .

— Սակայն չիկայ : Ես Միքա-
յէլը չեմ սիրեր , քանի որ չար ե-
ղած է , բայց անիկա այսօր շատ
դժբախտ է , և ես կը ցաւիմ վրան :
Իմ խորհելու կերպս այս է :

— Կարծեմ կը սխալիս :

— Կը կարծեմ թէ իրաւունք
ունիմ :

— Օ՛հ ուրեմն , խնդիրը պար-

գելու և ճշդութիւն համար, յայտարարեց իւր, այս գիշեր պիտի հարցնեմ հօրս թէ որերնի՞ս իրաւունք ունինք:

— Համաձայն եմ: Վաղը տեղեկացուր ինծի իր պատասխանը:

Երկու տղայքը դպրոց հասած էին: Անոնք բակը մտան, ուր դեռ քիչ մը պիտի խաղային դասարան երթալէ առաջ:

Բ.

ՄԱՐԿՈՍ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԷՐ

Վստակցիմք սառապողներուն

Երեկոյին իւր փութաց իմացնելու իր հօրը այն միջադէպը որ փոքրիկ վիճաբանութեան մը տեղի տուած էր իր և բարեկամին Մարկոսի միջեւ: Ան աւարտեց իր պատմութիւնը ըսելով.

— Այնպէս չէ՞, հայր, չէ՞ որ ստիպուած չենք օգնելու չար մարդոց, եթէ դժբախտութիւն մը պատահի անոնց:

Իւր կը սպասէր որ իր հայրը հաստատական պատասխան տայ, առանց իսկ վարանելու: Բայց Պ. Պէրնաւ, հայրը, չուզեց լուծել հարցումը եւ ըսաւ հարեւանցի կերպով.

— Տղա՛ս, ըսա՛ւ իւրին, կը փափաքեմ որ դուն անձամբ պատասխանես քու հարցումիդ: Եւ քանի որ սիրտդ ու խիղճդ բաւական լուսաւորուած չեն, փոքրիկ պատմութիւն մը ընեմ որ կարենայ օգնել քու դատաստանիդ լսէ՛:

«Բեզի ծանօթ ընտանիք մը կայ որ ամէն տարի Յունիս ամսուն գիւղ երթալու սովորութիւն ունի: Այդ ընտանիքի անդամներ

ըուն մէջ կայ փոքրիկ տղայ մը, որ շատ յատկութիւններով օժտուած ըլլալով, ունի սակայն, և կամ ունեցած էր անհնազանդ ըլլալու, և թռչուններու բոյնը քանդելու կրկնակ ունակութիւնը:

«Արդ, երկու տարի առաջ, հակառակ շատ անգամներ կըրկնուած արգելքին, մեր մանչուկը խուսափելով իր ծնողքին հսկողութենէն գնաց թռչունի բոյներ որոնելու: Ան եկ.քանիկի բոյն մը գտաւ խնձորենիի մը ճիւղին վրայ. վեր մագլցեցաւ, տէրեց հազիւ փետրացած ձագուկներուն, առանց փոյթ ընելու անոնց հօրը և մօրը ցաւալի ճիշերը, և... ան ինկաւ վար, հողին վրայ՝ չորս մէթը բարձրութենէ մը: Անկուսմին հետ, անոր սրունքներէն մին կոտրած էր:

«Գիւղացի մը, որ մօտերը կ'աշխատէր և ականատես եղած էր արկածին, աճապարեց օգնելու: Մարդը շատ լաւ տեսած էր ոտքերու ցաւէն հեծեծող տղուն չար և անգութ ըլլալը, բայց ան չվարանեցաւ օգնելու:

«Կրցածին չափ մեղմօրէն թեւերուն մէջ առաւ զայն, բնական վայրը հարցուց, և առանց կանգ առնելու տարաւ զայն իր ծնողքին: Անոնք, հակառակ այդ անխոհմին անհնազանդութեանը և անգթութեանը, բժիշկ կանչեցին և խնամեցին տղան՝ մինչև առողջանալը:

«Եւ հիմայ, իւրեւ, եթէ գիւղացին փոխանակ ակնաջ տալու իր բարի սրտին թելադրութեանը, քեզի պէս դատած ըլլար, այսինքն խորհէր թէ ստիպուած չկար օգնե-

լու չարերուն, ինչ պիտի պատահէր ծառին տակը ինկած տղուն:»

Խեղճ Լուի, որ ինչպէս կը գուշակէր, այս պատմութեան տխուր հերոսը հանդիսացած էր, շուարած, խոնարհեց գլուխը:

— «Հայր, ըսաւ վերջապէս, կը խոստովանիմ որ սխալած եմ.

— Եւ մեծապէս սխալած, տղաս: Դժբախտ մը՝ դժբախտ եղած ըլլայ իր սխալի հետեւանքովը կամ ոչ, պէտք է նախ մեր գութը շարժէ: Այսուհետեւ երբ ճամբան ատանկի մը պատահիս, նախ ձեռքդ բաց անոր ձեռքին մէջ ողորմութիւն մը դնելու համար, ապա ուղածիդ պէս կրնաս քննել թէ այդ դժբախտը համարկութեան արժանի՞ է թէ ոչ:»

Յաջորդ օրը Լուի կոյրին առջեւն անցած ատեն դրամ մը ձգեց փայտանօթին մէջ:

«— Ի՞նչ կը նշանակէ այդ, հարցուց Մարկոս, ուրեմն կը թուի թէ դադափարդ փոխեցիր.

— Այո՛, պատասխանեց Լուի, դուն իրաւունք ունիս: Ես անիրաւ էի:

Թարգմ. Վ. Մ. ԽԱՉԻԿԵԱՆ

ԾՆՈՂՔՆԵՐՈՒ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ.— Ամէն ուրբաթ կը հրատարակուի ԻԳՆԱՏ ԱՂԱ. երգիծաթերթը՝ խմբագրութեամբ ծանօթ երգիծարան Տիար Եր. Օտեանի. գին 5 դահեկան: Իսկ ամէն երկուշաբթի ատոուները՝ ՇԱԽԻՂ-ԻԳՆԱՏ ԱՂԱ. միացեալ. — Բշ. ատոուները կը հրատարակուի նաեւ ԱՌԱԽՅՍ լրագիրը ամենապերջին լուրերով եւ ճոխ բովանդակութեամբ: — Փնտոեցէք նաեւ ամէն կողմ ՈՍՏԱՆ գրական հանդէսը՝ գին 12 եւ ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏ Հ. Մ. Ը. Միութեան կիսամսեայ հանդէսը՝ գին 10 դր2.:

ԿԱՏՈՒՆԵՐԸ ՊԻՏԻ ՌԻՏԵՆ ՄՈՒԿԵՐԸ ՄՈՒԿԵՐԸ ՊԻՏԻ ՌԻՏԵՆ ԿԱՏՈՒՆԵՐԸ

Կազմութեան մէջ եղող Ամերիկեան ընկերութիւնը հետեւեալ շրջաբերականը հրատարակած է.—

Մեր նպատակն է կատու հասցրնել և անկէ հայթայթել մէկ միլիոն: Իւրաքանչիւր կատու տարին տասներկու ձագ կուտայ: Կատուի ձերմակ մորթին գինն է 5 փէննի և սեւինը երեք չիլին: Միջինը պիտի ըլլայ 1 չիլին և 3 փէննի: Ուրեմն մենք պիտի ունենանք իւրաքանչիւր տարի 12 միլիոն կատուի մորթ և օրական 2000 անգլ. ոսկիի խառն հասոյթ մը:

Մարդ մը կրնայ 50 կատուներ մորթազերծել՝ օրական 8 չիլինով: Հետեւաբար հազար մարդ պէտք պիտի ըլլայ գործը քալեցնելու համար: Այսպէս մեզի պիտի մնայ օրական 1600 անգլ. ոսկիի զուտ շահ մը:

Բայց ինչպէս պիտի սնուցանենք կատուները: Ասոր համար կատուներուն քովիկը պիտի հասցնենք մուկ: Մուկերը քառասուն աւելի կը շատնան կատուներէն: Ուրեմն մենք պիտի ունենանք իւրաքանչիւր կատուի համար օրական չորս մուկ, ինչ որ առատ է: Բայց, ինչպէս պէտք է կերակրել մուկերը: Ասիկա շատ պարզ է: Մորթազերծ կատուի դիակները լիովի կը բաւեն կերակրելու մուկերը: Քառորդ կատու մը կը բաւէ մուկի մը համար:

Այսպէս գործը կը ղեկավարուի ինք իրեն, ասիկա դարձող անիւն է:

Կատուները պիտի ուտեն մուկերը և մուկերը պիտի ուտեն կատուները: Եւ պիտի մնայ մորթ և դրամ: «Ճակատամարտ»

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Գ.— ՏԵՂԱԿԱԼ ՔՕԹՊԻՒՍԻ ԵՐԱԶԸ

Մարթա, քաջասիրտ նկարա-
գիր մը և զօրաւոր կամք մը ու-



(Մարթայի արտորուելէն առաջ)
Գերմանները հրապարակը հաւաքուած
կը խորհրդակցին

Նենալուն համար չէր միայն որ
կրցաւ իր արցունքները զսպել և
հետեւաբար հաստատ գիրք մը
պահել: Այլ նաև անոր համար որ
իր փոքրիկ գլխին մէջ ծրագիր մը
կը յղանար: Անշուշտ Մարթա չէր
երազեր փախչիլ այն դժբախտ
դեռատի կնկան նման՝ զոր հեծեալ
զինուորները այնքան բրտօրէն
ձերբակալած և մտցուցած էին
տարագիրներուն շարքը: Ի՞նչպէս
խոյս տալ բոլոր այս զինեալ մար-
դոց աւազակախումբէն և հեծեալ
զինուորներու մէջէն որոնք ամէն
մէկ շարժում և ընթացք նախա-
տալից կը լրտեսէին:

Մարթա ուրիշ ծրագիր մը
կ'որոճար: Այն խորհած էր այդ
բանին վրայ այն վայրկեանին իսկ՝
երբ մայրՄօրէն երեք աղուոր ոս-

կիները իրեն կուտար: Այդ պատ-
ճառաւ Մարթա Ժիւլիէնի բտաւ-
թէ զինքը վերստին պիտի տես-
նէր, և մանաւանդ որ անոր քա-
նիցս յանձնարարեց երկու օրէն
գանուիլ Ֆօթպիւս-օ-Րիդ:

Մինչդեռ Մարթա, բոլորովին
մտադրաղ, ո՛չ հանգչելու և ո՛չ
ալ ուտելու վրայ կը մտածէր և
ոտքի վրայ կը մնար ճամբուն
եղերքը, ահա հերման նոր
սպայ մը մէջտեղ ելաւ և աչքէ
անցուց «աքսորական»ները:

Այդ սպան տեղակալ մըն էր
և Քօթպիւս կը կոչուէր:



Տեղակալ Քօթպիւս

Ինչ որ տեղակալ Քօթպիւսի
վրայ աչքի կը դարնէր իր կարմիր
և հովահարածև մօրուքն էր և
գետնախնձորի նման մեծ քիթը:
Տեղակալ Քօթպիւս «բարի
տղու» մը տպաւորութիւնը կը
թողուր և նոյնիսկ ան զուար-
թաբարոյ էր ինչ որ կը հակասէր
իր նախորդ պաշտօնակցին ցուրտ
և ուղիղ ընթացքին: Բայց խո-

բամանկ և չար աչքերը, որոնք տեղակալ Քօթպիւսի ոսկիէ ափսոսանքներուն տակէն կը փայլէին, կը յայտնէին թէ պէտք չէ շատ վստահիլ անոր :

Տեղակալը սահուն կերպով կը խօսէր Քրանսերէնը և կը զուարճանար աքսորականներէն մէկ քանին հարցափորձելով : Ան Մարթայի առջեւէն անցնելու ատեն յօնքերը սլուստելէ և ժանիքները կախելէ չկրցաւ ինքզինքը դապել : Մարթայի կապոյտ խոշոր աչքը որ լաւ մը կը զննէր գիմացէն և կորովի կեցուածքը իր ընելիքներուն մասին բան մը չարտայայտեցին : Ընդհակառակը այս ընթացքը այնչափ ապստամբական էր որ կրնար շատ մը շարիքներու ծայր տալ :

Մարթա, որ այնքան երկարօրէն դիտած էր տեղակալ Քօթպիւսը, ոչ անշուշտ անոր կոշտ ընթացքովը զուարճանալու համար, վասնզի զուարճանալու վայրկեանը չէր, անմիջապէս ըմբռնեց թէ իր ծրագիրը իրականացնելու փորձին մէջ այս սպան կրնար արժէք մը ներկայացնել : Այն ատեն, կամովի անճարակութիւնով մը, թօթուելով իր վերարկուն, Մարթա անոր մէջէն ձգեց երեք գեղեցիկ ոսկիները որոնք ճամբուն խիճերուն վրայ ցրուեցան հնչելով :

Այնքան թանկագին և հազուագիւտ ոսկիներուն երաժշտութիւնը լսելուն պէս, տեղակալ Քօթպիւս, յանկարծ կանգ առաւ : Ակնոցներուն ետեւէն, իր փոքրիկ աչքերը ցանկալից սկսան փայլիլ : Եւ նշան ըրաւ զինուորի

մը որպէսզի հաւաքէ և իրեն յանձնէ ոսկիները :

Տեղակալը զանոնք քանի մը անգամ իր ձեռքին մէջ դարձնելէ ձեռքով զննելէ վերջ սկսաւ վեր վեր նետել և բռնել :

Խաբուելու բան չկայ, լաւ ոսկի է :


Իր պզտիկ աչքերը հեռացնելով ոսկիներէն, ուղղեց անոր որ այնքան անճարակութեամբ ցանած էր զանոնք :

Մարթայի ընթացքը այլևս կորովի և ընդվզեցուցիչ չէ՝ ընդհակառակը ան շուարած և երկչոտ կ'երեւի :

Տեղակալին մէկ հրամանին վրայ, երկու մարդ աքսորականներու շարքէն հանեցին Մարթան և քիչ մը հեռացուցին :

Այն ատեն հարցաքննութիւնը սկսաւ որոշ և մանրակրկիտ կերպով :

«Այս երեք ոսկիները քովդ են» հարցուց տեղակալ Քօթպիւս :



Աքսորական աղջիկը կը հարցաքննուի

Մարթա հաստատական թելե նշան մը ըրաւ :

«Սխալ մը դորձած էք. շարունակեց զնդապետը : Արշաւան»

քի ենթարկուած երկրի մը մէջ
կը գտնուէիք, հետեւաբար այս
ոսկիներուն ձեր քով գտնուիլը
պարտաւորեցի իմաց տալ» :

Յետոյ նուազ խիստ ձայնով
մը յարեց .

«Ասոնցմէ ուրիշներ ալ ունի՞ք .
բարիք գործելու ժամանակ է . . .
Ձեր ազատութիւնը կարելի է ձեռք
բերել :»

Որովհետեւ Մարթա կարմրելով
քիթը կախեց և պատասխան չի
տուաւ տեղակալը կրկնեց .

«Քեզի կը հարցնեմ ուրիշ ոս-
կիններ ունի՞ս : Մի շփոթիր, հա-
մարձակ պատասխան տուր :

— Ոչ պատասխանեց Մար-
թա : Եւ յարեց քիթն տակէն :
Հոս քովս չունիմ սակայն» :

Այս կարճ խօսքը չի վրիպե-
ցաւ տեղակալին ուշադրութենէն
որ իր մեծ քիթը ցնցեց և սկսաւ
քիթը վեր քաշել որպէս թէ ոս-
կինն հոտը առած ըլլար : (Շար.)

ԵՐԿՈՒՔՆ ԱՆ Կ'ԱՐՏԱՔՍԱԻՆ

Փիլիսոփային մէկը երկու ա-
շակերտ ունէր, մին ջանասէր՝
բայց անմիտ, միւսը մտացի՝ բայց
ծոյլ : Երբ տեսաւ որ անոնց եր-
կուքն ալ բան մը չեն սովորի՝
ելկուքը մէկանց արտաքսեց ըսե-
լով .

— Դուն կ'ուզես ուսանիլ
բայց չես կրնար, իսկ դու կըր-
նաս բայց չես ուզեր :

ՆՈՐ ՀԱԳՈՒՍՏ. — Պատկեն՝ր, 250
դրուշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
յին հագուստ ունենալու համար ծնողը-
նիդ առաջնորդեցէ՛ք Ձաքմաքճըլար,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վաճառատունը :


ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

Բ.

Տ Ե Ր Ե Ւ Ը

Անցած շաբթու ձեզ խօսած
էի արմատի մասին ու այսօր ալ
խոստումիս համեմատ պիտի խօ-
սիմ սերելի մասին, և կը յուսամ
թէ ուշադրութեամբ պիտի կարդաք
այս դասն ալ :

Տերելը.— Տերելին ձեր եւ
սեսակները.— Տերեւները հաճելի
կանանչ գոյն մը ունին, բոյսերէն
չոտեր խնձորենիի տերեւներուն



Խնձորենիի տերել

նման տերեւներ ունին, այսինքն
ձուլածեւ տերեւներ : Կան բոյսեր,
որոնց այս ձուլածեւ տերեւներուն
ծայրերը հարթ են. ուրիշներ կան,
որոնց ծայրերը առամիտաւոր են,
ինչպէս շաղանակենիին տերեւինը :



Շաղանակենիի տերել

Բոյսերուն տերեւներէն ոմանք


Տղոց հագուստի վաճառատուն

ՄԻՂՐԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Եւրոպական ծելով ճաշակաւոր, դիմաց-
կուն եւ աժան հագուստ ունենալու հա-
մար տղա՛ս, ծնողքդ առաջնորդէ Մեծ
Շուկայ, Իսկէնտէր Պօղազըի դրան ուղ-
ղութեան վրայ, Ֆէրահէճիլէր փողոց,
թիւ 1.

կոչա, ոմանք ալ նուրբ ատամ-
նաւորում ունին: Շատ մը բոյսեր,
ինչպէս անտառներու աստեղա-
ծաղիկները, ինչպէս նաև վայրի
ձիւնածաղիկները թէ նուրբ թէ
կոչա ձեւով ատամնաւորում տե-
րեւներ ունին, առանց հաշուե-
լու անոնց մանր տերեւները որոնք
հարթ ծայրեր ունին. այս բոլոր
տեսակները միևնոյն տունկին վրայ
կը գտնուին:

Տերեւ մը կրնայ երկար ու
ձուլածեւ, կամ կարճ ու լայնածեւ
ըլլալ. տերեւներ ալ կան որ գրե-




Պատուհակի տերեւ

թէ կլորածեւ են: Կան սրտաձեւ
տերեւներ, ինչպէս պատուտակի
տունկինը:

Շատ մը բոյսեր ալ ժանեկա-
ձեւ եղերքներով տերեւներ ունին,
որոնց ծայրերը կլորածեւ՝ բայց
ներս դուրս կտրուած ձեւով են:
Գրեթէ բոլոր կաղնիներ այսպիսի
տերեւներ ունին: Եղկաղնին և ուրիշ
քանի մը տեսակ կաղնիներ ալ
ձուլածեւ տերեւներ ունին:

Կակաչածառ կոչուած ծառին
տերեւը շատ հետաքրքրական ձև



Կակաչածառի տերեւ

մը ունի, որ շատ գեղեցիկ է:

Այս տերեւները կ'աճին կակաչա-
ծառին վրայ, որ խոշոր ու բարձր
ծառ մըն է: Ասոնց այս անունը
տրուած է, որովհետև կակաչա-
նման խոշոր ծաղիկներ ունին:
Այս սքանչելի ծառերը ամերիկ-
եան անտառներու մէջ կ'աճին:

Կան ծառեր որոնք աստե-
ղածեւ տերեւներ ունին. Գլքին
ևս գեղեցիկ ու մօտաւորապէս
աստեղածեւ տերեւներ ունի: Կան
տակաւին ուրիշ զանազան ձեւե-
րով շատ մը տերեւներ: Կան բոյ-
սեր ալ, ինչպէս մայրիկներուն շատ
մը տեսակները, ասեղնածեւ տե-
րեւներ ունին որոնք փունջածեւ
կախում կ'ըլլան ծառին վրայ:
Մնեքեկի (գուշ գօնմաղ) տունկը,
որուն թարմ ընձիւղները կուտենք,
ունի քելածեւ տերեւներ, որոնք
կլոր խուրճերով կը կախուին ցօ-
ղունէն:

Կան շատ մը բոյսեր ալ որոնց
տերեւները գնդաձեղէ աւելի հաս-
տեղ են: Նաև կան բոյսեր շատ կարճ
ու թանձր տերեւներով:

Տերեւներուն պատճօնը.— Տե-
րեւները մեծ մասամբ նուրբ և
լայն են: Բարակ ըլլալով թեթև
ալ են, որով կարելի կ'ըլլայ որ
ծառ մը իր շատ մը ճիւղերուն
և ոստերուն վրայ անոնցմէ հա-
զարաւորները կրէ և ճիւղերը
չկոտրտին ու ծառը չի տապալի:
Լայն ըլլալով ալ օդին հետ շատ
շփում կ'ունենան և ճիշդ ատոր
համար է որ բոյսը կամ տունկը
կը կրէ զանոնք իր վրայ: Տերեւ-
ներն են որ օդէն պէտք եղած
սնունդը կ'առնեն բոյսին համար,
տեսակ մը շնչառութիւնով: Տե-
րեւը երկու կողմերը նուրբ կե-

դեւ մը ունի . վարի կողմի տե-
րեւը շատ մը , նուրբ ծակտիքներ
ունի , որոնցմէ հաղարաւորներ
կան միակ տերեւի մը տակ . այս
ծակտիքներով է որ օգը ներս կը
թափանցէ տերեւներէն . հոն օդին
մէկ մասը կը միանայ այն հոյզին
կամ հեղուկին , որ արմատներու
միջոցաւ ելած է մինչև տերեւ-
ները : Այս երկուքին միացումովը
առաջ կուգայ բոյսին անունը :

Երբ հովը փչէ տերեւները կը
ծռին ու կը դողդողան , բայց ի-
րենց դիմացկուն կոթուններով
հաստատ կը մնան ոտներուն վրայ .
տկար կոթուն ունեցող տերեւնե-
րէն ոմանք ծառէն վար կը թափ-
թըփին բայց այդ բանը չի փնտեր
ծառին : Ծառին հաստատուն , կո-
րածե բունը հազիւ թէ կը շար-
ժի , և զօրաւոր կընդհանր
միայն կը հակին , բայց չեն կո-
տրիր , մինչ արմատներն ալ բոլոր
ծառը ամուր կը պահեն իր
տեղը :

Յորդոր. — Տերեւներու մասին
այս ամփոփ ծանօթութիւնը ստա-
նալէ ետքը աւելի ուշադրութեամբ
պիտի դիտէք ու զննէք տերեւ-
ները , որոնք նախապէս ուշադրաւ
ոչինչ ունենալ կը թուէին ձեզ :
Հետաքրքրութեան համար պար-
տէզ մը կամ ծաղկանոց մը դա-
ցէք ու համբեցէք թէ քանի տե-
սակ տերեւ պիտի կրնաք գտնել .
տեսէք թէ անոնք այս ըսուած
ձեւերէն որո՞ւն կը նմանին : Նաև
ուշադիր զննեցէք տերեւներուն
վերը՝ արեւին և վարը հողին դար-
ձած կողմերը եւ նկատեցէք երկու
կողմերուն գոյնի և կազմուածքի
տարբերութիւնը , քննեցէք նաեւ

տերեւներու մէջի նրբեալները .
անոնք մեր մարմինին սեւերակ-
ներուն չէ՞ն նմանիր : Երբ այս
ուսումնասիրութիւնը ընէք , պի-
տի տեսնէք թէ սոսկ պզտիկ տե-
րեւ մը հատոր մը գիրքի չափ հե-
տաքրքրական է ու սորվելիք շատ
մը բաներ կը պարունակէ իր մէջ :
Արդէն ճշմարիտ ուսանողութիւնն
ալ այս կը պահանջէ . գիտել , պր-
պրտել , ուսումնասիրել և սորվիլ :
Յաջորդով պիտի խօսիմ շատ
աւելի հետաքրքրական նիւթի մը ,
ծաղիկներուն վրայ :

Ամփոփեց
ԳՐ. Հ. ԴԱՆՈՒՍՏԵԱՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԹԻԻ 30

Արմատս ունի համը ազին ,
Զիս կը տեսնես մէջը խաղին ,
Ու տուններուն բոլոր թաղին ,
Բայց չեմ դրուիր մէջը՝ մաղին ,
Ո՛չ ալ համով անուշ ծաղին .

Զըլլա՛յ կարծէք դուք զիս կաղին

Արմատս է ջուր :

Օ՛ն , ի՞նչ եմ ես ,

Պատասխա՛ն տուր :

Ս. ԴԱԻԹԵԱՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԹԻԻ 31

Առաջինը՝ կը խայթէ ,
Երկրորդը՝ կը բուսնի ,
Ամբողջը՝ լուսաւորէ ,
Գտի՛ր բառը , պատան :

Մ. ՍՎԱՃԵԱՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԹԻԻ 32

Քառակուսի մըն եմ ես ,
Երբոր կռնակս դուն լղես ,
Քաղքէ քաղաք զիս շրջես ,
Գիտցիր նայիմ ինչ եմ ես :

Վ. ՄՈՄՃԵԱՆ

THIRTEENTH ENGLISH LESSON

VERBS

To have (ունենալ) բային խոնարհումը

(Շար.)

If I have = եթէ ունենամ
If you » = եթէ ունենաս
If he has = եթէ ունենայ
If we have = եթէ ունենանք
If you » = եթէ ունենաք
If they » = եթէ ունենան

If I had = եթէ ունենայի
If you » = եթէ ունենայիր
If he » = եթէ ունենար
If we » = եթէ ունենայինք
If you » = եթէ ունենայիք
If they » = եթէ ունենային

Have = Ունեցիր

Let us have = Ունենանք

Բ Ա Ռ Ե Ր

Kitty — քիթի = կատուի ձագ
Want — ուոնթ = ուզել
Eat — էյթ = ուտել
Mouse — մաուս = մուկ
catch — քէչ = բռնել
Gg — հօ = երթալ

One — ուան = մէկ
Bring — արինկ = բերել
Soon — սուն = շուտով
Run — րըն = վազել
Meet — միթ = հանդիպիլ
I think — ալ թհինք = կարծեմ

EASY STORIES

I

The Hungry Kitty

Kitty is hungry. What does she want to eat? She wants a mouse to eat. Why does n't she go and catch one? She is too small. Her mother will bring her one soon. When kitty sees her mother she will run to meet her, and I think she will say, «Did you catch that mouse for me, mother?»

All things bright and beautiful,
All creatures great and small,
All things wise and wonderful,
The Lord God made them all.

Թիւ 25 բառեղծուածին լուծումը

Խ ա ն ծ Ահա չորս բառեր, որոնք
Ա զ ո խ իրարու տակ դրուելով թէ
Ն ո յ ն հորիզոնական եւ թէ ուղ-
Ծ խ ն ի ղաձիգ կերպով միանգա-
մայն կը կարդացուին:



Միեւնոյն բառեղծուածին ուրիշ կերպ
լուծումներէն

Լ ո յ ծ	Խ ա ն ծ	Կ ա յ ծ
Ո ս ո ի	Ա ն ո ը	Ա թ ո ռ
Յ ո ռ ի	Ն ո ը ա	Յ ո ռ ի
Ծ խ ի չ	Ծ ը ա ը	Ծ ո ի Լ



28 եւ 29 բառեղծուածներուն լուծումն է

	Փ ա Պ ա ը
	Լ ե ո
ա ղ Կ ե ը	Կ ա Տ ո Լ
բ ը Ի ն ծ	ա ը ի
Փ ի Լ ո ն	Կ Ո ը
Կ ի Լ Ի Կ ի ա	Վ ա Ս ա Կ
ա ն ն Կ ո Լ ն	Տ ը Դ ա տ
օ մ ե Կ ա	ծ Ո վ
Կ ա Յ ի ն	ո Ի Լ
պ ղ Ի ն ծ	դ ա ը ա Կ
	ո ե Լ
	Վ Ա ն
	տ ա Ն ի ը



ԼՈՒԾԵՅԻՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎՐԺ. (Սկիւտար)

Նուրհան Տէր Ներսէսեան, Տիգրան
Գարապօղոսեան, Պօղոս Մելիքեան,
Յարգիս Պալեան 29ը. Պարոյր Եաղուա-
եան 27ը:

ԱՐԱՄԵԱՆ ԿՐԹԱՐԱՆ (Սկիւտար)

Արամ Թարագճեան 29ը:

ԹՈՐՈՍԵԱՆ ՎՐԺ. (Գատրգիւղ Մօտա)

Մանուշակ Տատրեան, Վարդանոյշ
Իւթիւճեան 29ը:

ՌՕՊԵՐԹ ԳՕԼԷԺ

ձորն Գոլյումեան, Մարթէն Շա-
հանկիրեան, Զաքարիա Պուտաքեան,
Հայկասէր Թիրեաքեան, Պերճ Եղիա-
ղաքեան 25 եւ 29ը:

ԵՍՍՅԵԱՆ ՎՐԺ.

Տիգրան Տէտէեան, Յակոբ Զօմէր-
ճեան 29ը:

ՏՍՏԵԱՆ ՎՐԺ.

Ա. Յ. Տատրեան, Եղուարդ Զանրէ-
ճեան 25 եւ 29.

ՖՐԱՆՍ. ՎՐԺ. (Գոլմգարու)

Մելքոն Գալէնտէրեան 25 եւ 29ը:

ՍԷՆ ԺՕԶԷՖ ԳՕԼԷՃ (Գատրգիւղ)

Համբարձում Մազմանեան 25 եւ 29ը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎՐԺ. (Կէտիկ Փաշա)

Արշակ Տէմիրճեան, 25, 28 եւ 29.

Նուպար Համբարեան 24ը:

ՄԻՆԱՍԵԱՆ ՎՐԺ. (Գոլմգարու Լանկա)

Սերոբէ Սերոբեան 25 եւ 29ը. Ա-
պաճեան, Մելինէ Փապուճեան, Վահ-
րամ Խտնճեան, Արտաւազդ Յովսէփեան,
Յակոբ Տաղարեան, Վահամ Զաքարեան,
Միհրան Պէզճեան, Նուպար Քէօշէ-
եան 29ը:

Ս. ՄԵՐՈՊԵԱՆ ՎՐԺ. (Կէտիկ Փաշա)

Յարութիւն Մանուշակեան 25ը,
Հայկ եւ Մելինէ Սարաֆեան, Սուրէն
եւ Մաքրուհի Տէր Գրիգորեան Լեւոն
Մեսրոպեան, Իւղաբեր Պասմաճեան, Ես-
թեր Զօլաքեան 25 եւ 29, Նուպար Դա-
նիէլեան, Արաքսի Մուշլուեան 29ը.
Զարեհ Ժամկոչեան, Շաւարշ Կիւմիւշ-
կէրտանեան 28 եւ 29ը:

ՄԱՅՐ ՎԱՐԺԱՐԱՆ

Փեփրոնէ Պէսիմեան 25 եւ 29ը.
Հերմինէ Պարսամեան, Էօժէնի եւ Իս-
կուհի Գանապեան, Տիրուհի Ապագա-
եան 29.

Ս. ԽԱԶ ԵՐԿՍԵՌ ՎՐԺ. (Սկիւտար)

Հրանտ Մինասեան 25 եւ 29ը:

ԼՈՒԾԵՅԻՆ ՆԱԵԻ

Ալիս Տէր Արքայամեան (Բանկայթի)
25, 28 եւ 29ը. Ժիրայր Սագսեան (Գա-
տրգիւղ) 19, 20, 21, 22 եւ 23ը. Մելքոն
եւ Սօֆի Մելիքեան (Գանտլիի) 29ը:

Բոլոր կարծր առարկաները մաք-
րելու եւ փայլեցնելու համար գործածէ

ՊԷՊԻՅՍ ԳԼԻՆԱԸՐ

հանրածանօթ ամերիկեան փողին

Ա Կ Ն Ա Ր Ո Յ Ժ

ՏԲԹ. Մ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Գարու, Իքի Բարուլու
դեղարանը, Կէսօրէ վերջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳԼԻԱՌ**

Տարեկան (48 թիւ) 120 Դան.

Վեցամսեայ (24 ») 60 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (48 ») 20 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Առաւօս նորահասներու պատկերազարդ շաբաթաթերթին հասցէն է՝ Պապը Ալի, Բ. Դրան ճիշդ դիմացը թիւ 43:

ՏԲԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԴԷՏ՝ աղանջի, քիթի եւ կոկորդի հիւանդութեանց

Պահէ Դարու, Համիտի, թիւրպէսի դէմ. Արիկ Իւթիւնեան դեղարանի վերնայարկը:

ՏԲԹ. Ա. ՍԷՄԵՐՃԵԱՆ

Գունգարու, Պատրիարքարանի կարգը Հիւանդ կ'ընդունի նաեւ ամէն օր ժամը 3էն 5, Բանթարճըլար, Էփրօրիտի դեղարանը:

Տղոց մարալին հիւանդութեանց դարմանատուն

ՏԲԹ. Թ. Յ. ՄԶՐԿԵԱՆ ԵՒ

ՏԲԹ. Թ. Գ. ԿՈՍՏՍՆԴ

Մեծ շուկայ, Գալրագճըլար, Պայագիտի դրան դէմ, թիւ 18:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմար գարու, Մաքաճըլար, թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամանած, ամերիկեան եւ անգլիական կօշիկներ սկսան վաճառուիլ, արանց 400, կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն. Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ, տոկոսն եւ ճեւաւոր:

ՀԱՅԿ ՄԱՀՅԱԶԱՆԵԱՆ

ՄԱՔՍՍՅՈՒՆ ՅԱՆԶՆԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօր» ապրանքներ Մահմուտ Փաշա, Բամանթօ խան, թիւ 23

ՊԻԻՔԱՍԷՔԹԻՆ

BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ ազդու հականեխիչ եւ դարման բերնի բորբոքումներու, ալուալի ցաւերու, լինտերու հիւանդութեանց եւ բերնի գարշահոտութեան, ծայնի մարելուն, ամէն տեսակ հարբուխներու, չոր հագերու, ախտները մարբելու եւ ճերմկացնելու:

ՔՐԷՄ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ

CRÈME SARCOPTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ երեք օրէն կատարելապէս կը բուժէ հին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան, կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը Օսմանիէ ճատոնէսի, Օսմ. Կեդր. Դեղարանը, թիւ 48:

ՏԲԹ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԵՎԼԵԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փաշայի զին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դեղերով եւ ներարկումներով քիչ ժամանակի մէջ առանց ցաւի կը բուժէ վերքեր եւ ախտեր. Կը գտնուի ամէն օր բացի Կիրակիէ, Գարաքէօյ, Ազ. Փօսթին դեմաց Հին Վոյվօտայ թիւ 3

Տպագր. «Առաւօս» Հանդեսի

ԱՐԵՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ.